Ð²Ú²êî²ÜÆÐ²Üð²äºîàôÂÚàôÜ
Èàèàô Ø²ð¼äºî²ð²ÜÆ ²ÞÊ²î²Î²¼ØÆÔºÎ²ì²ð

Ðð²Ø²Ü

13 հունվարի 2011թ. թիվ 1

Ղեկավարվելով “Գնումների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Շինարարական աշխատանքների գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով գնումների համակարգող ստորաբաժանում սահմանել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը:

Նշված աշխատանքների գնումների համակարգող նշանակել՝

1) քաղաքաշինական աշխատանքների գծով՝ նույն վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Աշոտ Փանոյանին;

2) ճանապարհաշինական աշխատանքների գծով՝ նույն վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ Սուրեն Ավետիսյանին:

2. Լոռու մարզպետարանի կարիքների համար ձեռքբերման ենթակա ապրանքների և ծառայությունների գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով գնումների համակարգող ստորաբաժանում սահմանել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը:

Ապրանքների և ծառայությունների գնումների համակարգող նշանակել նույն վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Դավիթ Թամարյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ս.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2011թ. հունվարի 13
ք.Վանաձոր